№ 42 Մարտի 14 (26) 1880 Մարտի 14 (26) № 42

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Յաւտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Նացի կիրակի և տօն օրերից)

Տպատառութիւն Ա. Ա. Մելիքեանց և Ա. Ա. Ալիխանեանց։
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր հրդեհները.—Ներքին տեսութիւն, Նամակ Շուշուց, Նամակ Շամախուց, Նամակ Բագուից, Նամակ Խմբագրին, Ներքին լուրեր.—Արտաքին տեսութիւն, Թիւրքիա, Յունաստան, Աւստրօ-Ունգարիա.—Գիշակիր հեռագիրներ, —Յայտարարութիւններ, — Բանասիրական, Խնդիր։

ՄԵՐ ՀՐԴԵՀՆԵՐԸ

Թիֆլիսում աւելի և աւելի յաճախ կրկնվող հրդեհները, կասկած յարուցանելով հասարակութեան մէջ, թէ կրակը դիտմամբ են գցում մեր պատուելի վաճառականները, ստիպում են մեր տեղական ամբողջ մամուլը խօսել հրդեհներին առաջն առնելու միջոցների վրա։

«Մշակը» վաղուց է արդէն առաջարկել էր, որ կրակի դէմ ապահովութեան ընկերութիւնների ագէնտները ապահովացնէին մեր վաճառականների ապրանքները միայն այն ժամանակ, երբ վաճառականը գոնէ հինգ տարի առուտուր է արել և հինգ տարվայ նրա առևտրի շրջական կապիտալի միջին դումարը յայտնի է արդէն. բացի սորանից մենք առաջարկեցինք որ արգելվի ապահովացնել այն վաճառականի ապրանքները, որ առևտրական կանոնաւոր մատեաններ չունի։

Ռուս «Обзоръ» լրագիրը այժմ գրեթէ նոյն է առաջարկում, այն է որ բացի կրակի դէմ ապահովութեան ընկերութիւնների ագէնտներից, քաղաքային վարչութեան ներկայացուցիչներն էլ գնահատէին ապրանքների արժողութիւնը։

Այդ բոլոր միջոցները, իհարկէ, պէտք է գործ դրվէին և այն ժամանակ, երբ հրդեհները այդքան յաճախ չէին կրկնվում և այդքան սպառնալի չէին։ Հայց ինչպէս միշտ, մենք այն ժամանակ խիստ և ազդու միջոցների վրա ենք մտածում, երբ վտանգը արդէն մեծ է....

Իսկ այժմ, հապա թէ այդ սովորական և օրինաւոր միջոցներն էլ կարող են օգնել, երբ հրդեհները մեզ մօտ դառնում են մի տեսակ վարակիչ հիւանդութիւն....

Վարակիչ, տարափոխիկ հիւանդութիւնների ժամանակ, առհասարակ, այսինքն այն ժամանակ, երբ վտանգը մեծ և սպառնալի է, գործ են դրվում արտակարգ միջոցներ....

Այդ պատճառով այժմ ցանկալի է, որ կառավարութիւնը առհասարակ արգելի մեզ մօտ խանութների մէջ ապրանքների կրակի դէմ ապահովացնելը։

Եւ այն ժամանակ, կը տեսնէք որ մեր բոլոր յարգելի վաճառականները շատ զգոյշ կը դառնան և հրդեհները այնուհետև էլ չեն պատահի։

Գ. Ա.

ԽԵՆԹԸ

ԱՐԿԱԾՆԵՐ ՎԵՐՋԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ

—

ԺԴ.

Թօմաս էֆֆենդին դեռ մի քանի օր մնալու էր ծերունի խաչօի տանը. նա իր գործերը Ո...գիւղում բոլորովին չէր վերջացրել։

Ծերունի խաչօի տանը ամեն տարի մի քանի անգամ յայտնվում էր մի ուրիշ հիւր ևս. դա մի երիտասարդ էր Արարատայ գաւառից, որ գնում էր խաչօից ոչխարներ, եղներ, բուրդ, պանիր, իւղ և տանում էր Ալէքսանդրապոլի կամ Երևանի կողմերում ծախելու. իսկ փոխարէնը նա բերում էր այնպիսի վաճառքներ, որ այս կողմերում չը կային, օրինակ, հագուստի համար զանազան տեսակ գործուածքներ, չիթ, կտաւ, մահուդ, թէյ, շաքար, կօֆէ և այլ զանազան մանրուքներ։ Գաղաքներից հեռու գտնված գիւղերի համար, որպէս էր Ո... գիւղը, մեծ կարևորութիւն ունէին այսպիսակ մարդ վաճառականները, նրանք տալիս էին գիւղացուն այն, ինչ որ պէտք է նրա համար, և փոխարէնը առնում էին այն, ինչ որ գիւղացին ինքը հեռու տեղեր տանելու և վաճառելու համար չատ արգելքներ ունի, մանաւանդ մի այնպիսի երկրում, ուր քարվանի բանուկ ճանապարհներ չը կային, և աւազակների երկիւղից յարաբերութիւնները համարեա կտրված էին։

Ամեն անգամ, երբ յայտնվում էր այդ երիտասարդը, մեծ ուրախութիւն էր պատճառում ծերունի խաչօի տանը. նա այն աստիճան ընտանեցած էր, որ բոլորը վարվում էին նրա հետ, որպէս իրանց գերդաստանի անդամներից մէկի հետ. Մանելով Ո...գիւղը, նա իր փոքրիկ քարվանը, որ բաղկացած էր մի քանի բեռնակիր գրաասաններից, ուղիղ գնում էր դէպի ծերունու տունը, բեռները ցած էր բերում և այնտեղ չորթներով մնում էր, մինչև իր առևտուրը վերջացնելով, կրկին ճանապարհ էր ընկնում։

Թօմաս էֆֆենդու գալուց մի օր յետոյ յայտնվեցաւ երիտասարդը. նա հանդիպեց կապալառուին խաչօի տան դրանը, երբ իր բեռները ցած էր բերում ձիաներից։

—Ա՛, դու այստեղ ես, ասաց երիտասարդը մօտենալով էֆֆենդուն, և անդադար երեսը խաչակնքելով.—Ա՛խ, սատանայի երես տեսայ, էլ այս անգամ իմ գործը չի յաջողվի....յանուն Հօր և Որդւոյ....

Էֆֆենդին խիստ ախորժակով ծիծաղելով, բռնեց երիտասարդի ձեռքը, և ուղիղ նրա երեսին նայելով, ասաց.

—Խնկի՛ր ես, խնկի՛ր, ես հազար անգամ ասել եմ, որ դու խնկի՛ր ես.—Լաւ, դու այն ասա, ո՞ւմ բերել ես ինձ համար։

—Մի քիչ զարուճար եմ բերել, որ խմես, և այդ խեղճ գիւղացիները քո ձեռքից ազատվեն, պատասխանեց երիտասարդը նոյնպէս ծիծաղելով։

Այնտեղ հաւաքված էին մի քանի գիւղացիներ, որոնք օգնում էին երիտասարդին բեռները ձիերից ցած բերելով և ներս տանելով. էֆֆենդին նկատեց, որ անպատշաճ էր խնկի՛ր հետ գիւղացիների առջև այստեսակ կատակներ անել, չուտով հեռացաւ, ասելով, որ գիւղումը գործեր ունի, և աւելացրեց, թէ ճաշը միասին կուտանք։

—Գեղ հետ հաց ուտելը մեղք է, ասաց նրան երիտասարդը։

—Ախար էշի պոչը ոչ կերկարի և ոչ էլ կը կարճանայ,—քո խելքն էլ այդպէս է, պատասխանեց կապալառուն,—ելչին Երուսաղէմ էլ տանես, էլի էշ կը մնայ, երբէք մուղդուսի չի դառնայ, աւելացրեց նա։

—Ա՛խ, երբ որ դու սկսեցիր քո էշավարի առակները, էլ վերջ չը կայ, ասաց երիտասարդը և երեսը չուռ տուեց։

Էֆֆենդին հեռացաւ։

Արդէն ծերունի խաչօի տան մէջ մեծից մինչև փոքրը լսել էին, որ վարդանը եկել է—այսպէս էր երիտասարդի անունը,—և անհամբերութեամբ սպասում էին, մինչև նա իր բեռները կը բաց անէր, Ո՛վ ասես նրան մի բան չէր պատուիրել բերելու իր համար։ Նա բեռները տարաւ և դարսեց տան սրահի մէջ, և ահա վրաթափվեցաւ խաչօի տան ամբողջ բանակը, Մէկը հարցնում էր. բերեցիր իմ պատուիրած կօշիկները. միւսը հարցնում էր. բերեցիր իմ պատուիրած գլխարկը—մի խօսքով, ամեն կողմից մի ձայն էր լսվում, և ամեն կողմից պահանջումներ էին անում, և մինչև անգամ փոքրիկ երեխաներն, նրա փէշերից բռնած, զանազան բաներ էին պահանջում և հանգստութիւն չէին տալիս։

—Բերել եմ, բերել եմ, պատասխանում էր երիտասարդը,—ամենիդ ուզածը բերել եմ։

—Դէ տուր, դէ տուր, ձայն էին տալիս ամեն կողմից։

—Տօ սատանի լակոտներ, ասում էր երիտասարդը,—թողէք մի հանգստանամ, յետոյ բեռներս բաց կանեմ, ինչ որ ուզում էք, կը տամ։

—Հիմայ, հիմայ, կրկնում էին ամեն կողմից։

Տանեցիք այնքան սովորել էին վարդանին, որ այլ ևս ուշադրութիւն չը դարձրին նրա վրա, և սկսեցին իրանք բաց անել հակերը. Երբ կապերը և փաթաթները արձակեցին, այնուհետև բոլորը վրաթափված, սկսեցին խլխլել պահանջած իրեղէնները. Երիտասարդը հեռու կանգնած, բարեսրտութեամբ նայում էր նրանց ուրախութեան վրա, և ծիծաղելով ասում էր.

—Ա՛յ, ձեր տունը չը քանդվի, քրդերն էլ այդպէս չեն թալանում վաճառականի ապրանքները։

Բայց միայն մէկը, որ մօտ չեկաւ նրա հակերին, դա Սաեփանիկը կամ այժմեան Լալան էր։ Նա հեռու կանգնած, նայում էր և երբեմն ժպտում էր։ Երիտասարդը մօտեցաւ նրան և հարցրեց.

—Դու ինչու՞ ոչ մի բան չես վեր առնում։

—Ի՞նչ վեր առնեմ....պատասխանեց նա կարմրելով։

Եւ իրաւ, ինչ վեր առնէր նա։ Նրա կեղծ և ծպտեալ տղայութիւնը վաղուց արդէն ձանձրացրել էր նրան, իսկ աղջկայ պատկանող մի բան նա վեր առնել կարող չէր։ Վարդանը հասկացաւ նրա միտքը և հանիւս լսելի ձայնով ասաց.

—Ես քեզ համար մի լաւ բան եմ բերել,

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՅ

—

26 փետրվարի

«Մշակ» լրագիրը կարդալով վասպուրականում եղած սովի մասի, պարտաւորութիւն համարեցինք օգնել ըստ կարեաց մեր սովատանջ եղբարց, և բացինք ստորագրութիւն. Մի քանի օրուան մէջ հաւաքվեցաւ երկու հարիւր յիսուն և վեց րուբլի քան կօպէկ, որից գուրս գալով փոստի ծախք 2 ր. 20 կ., մնացածն, երկու հարիւր վեցն և չորս րուբլ ուղարկելով ձեզ, կը խնդրենք խոնարհաբար հասցնել ուր հարկն է։ Նոյնպէս խնդրենք հրատարակել նուիրատուաց անունները։

Մ. Իւզբաչեանց 2 ր., Հ. Գալամեանց Ա. 2 ր., Մաւսայելեանց 1 ր., Մ. Լալազարեան 1 ր., Ն. Էֆէ-Մկրտչեանց 1 ր., Բ. Գալեան 1 ր., Ս. Մկրտչեան 1 ր., Ց. Գոնդաղսազեան 1 ր., Մ. Կոստակեան 2 ր., Ն. Օհանեան 1 ր., Ա. Մկրտչեան 1 ր., Բ. Յովհաննէսեան 1 ր., Հ. Բարսեղեան 1 ր., Ց. Ներսէսեան 1 ր., Ց. Սարգսեան 1 ր., Մ-ին Շահկեալտեան 1 ր., Կ. Դաւթեան 1 ր., Գ. Էէր-Իսահակեան 1 ր., Ս. Գասպարեան 1 ր., Հ. Քարանեան 1 ր., Ա. Աճաքեան 1 ր., Ց. Գէորգեան 1 ր., Շ. Սարգսեան 1 ր., Մ. Աստամեան 1 ր., Ս. Ալէքսանեան 50 կ., Կ. Ազաբէկեան 50 կ., Ա. Էէր-Մրչեան 1 ր., Ի. Էէր-Իսրայէլեան 1 ր., Գ. Էէր-Գրիգորեան 1 ր., Մ. Բ. Մալիեան 1 ր., Մ. Շահնազարեան 1 ր., Գ. Ղարաբէկեան 50 կ., Ս. Ստեփանեան 50 կ., Ց. Պողոսեան 50 կ., Ա. Աճաքելեան 1 ր., Բ.

—Ինչ բան, հարցրեց աղջիկը նոյնպէս մեղմ ձայնով։

—Ցետոյ կը տամ, բայց ոչ ոք պէտք է չը տեսնէ....

Լալան կրկին ժպտաց և հեռացաւ։

Վարդանը քան և հինգ տարեկան երիտասարդ էր, բարձրահասակ, ամուր կազմուածքով և դէմքի խոշոր գծագրութեամբ, որ չէր կարելի ասել, թէ գեղեցիկ էր. Նրա մեծ, սեռրակ աչքերը աւելի աւազակային արտայայտութիւն ունէին, իսկ փոքր ինչ ուռած շրթունքի վրա միշտ կարելի էր նշմարել մի դառն հեգնութիւն. Նրա չարժուածքի համարձակութիւնը և ճարպկութիւնները գործի մէջ իսկոյն ցոյց էին տալիս մի չափազանց մարմնական ուժ, խակսէս որ տեղացի էր նա, կամ ինչ տեսակ անցեալ էր ունեցել,—այս կողմերում ոչ ոք չը գիտէր. Միայն նրա մասին խօսվում էին չատ բաներ, որ լաւ վկայութիւն չէին տալիս նրա վարքի մասին. Նրան համարում էին մի գիծկից փախածած մարդ, որ կեանքի ամեն մթին խորշերում մտել ու դուրս էր եկել. Մի ժամանակ նա մի վանքում էր եղել, որպէս սարկաւագ և միաբան. մի ժամանակ վարժապետ էր եղել. բայց թէ ինչ պատճառով թողեց վանքը և դարձաւ,—յայտնի չէր. Միայն նրա վանքային և դարձյան կեանքից պատմվում էին այնպիսի անհեթեթներ, որ յաճախ էին մի տարապայման բնաւորութեան։

Բայց ինչ որ ճշմարիտ էր, այն էր, որ Վարդանը յայտնի էր այս կողմերում, որպէս մի նշանաւոր մաքսախոյս (կանտրաբանդիստ). Նա ուներ այդ պարապմունքին յարմար բոլոր պայմանները՝ արիութիւն, ճարպկութիւն և սատանայական խելք. Մշտապէս վտանգների և արկածների հետ պատերազմելով, նա սեպհականել էր իրան երկաթի հաստատամտութիւն աներկիւղ քաջասրտութեան հետ։

Կար մի ուրիշ բան ևս. Ոչ միայն Թօմաս էֆֆենդին Վարդանին խնկի՛ր էր համարում, բայց, թէ Ո... գիւղում և թէ նրա չրջակայքում նա ճանաչված էր մականունով «խնկի՛ր». Ինչ քանի մէջ էր նրա խնկիութիւնը, Վարդանը չիմար տղայ չէր. Նա չատ կարդացել էր, նա չատ բազմակողմանի գիտութիւններ ունէր. Նա բաւական ճանա-

Ցուցակ 1 թ., ին. Կրոտոնեան 1 թ., ին. Կրոտոնեան 1 թ.,